

**ՀՈԳՇ. Տ. ՏԱՃԱՏ Ծ. ՎՐԴ. ԵԱՐՏՈՄԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ  
ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԹԱՅԹՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ  
10ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԻ ՁԵՌՆԱՐԿԻՆ**

Մեծապէս գնահատելի է, որ Դոկտ. Ֆրիտա ճորտընի նախագահութեամբ, Վարիչ Մարմնի եւ Խորհրդատուներու Կազմի նուիրեալ ծառայութեան շնորհիւ, ոսկրածուծ հայթայթող յանձնախումբը անցնող տասը տարիներէ ի վեր մարդասիրական օգտակար ծառայութիւն մատուցած է մեր ժողովուրդի զաւակներուն:

Ոսկրածուծի Հիմնարկին տասնամեակը պաշտօնապէս նշուեցաւ Կիրակի, Յուլիս 25ի երեկոյեան ժամը 6:00ին Կլէնտէյլի Հիլթըն Պանդոկին մէջ: Գործադրուեցաւ վայելուչ յայտագիր մը: Խօսք առաին Դոկտ. Ֆրիտա ճորտըն եւ պատասխանատու այլ անձնաւորութիւններ: Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայացուց Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան, որ Սրբազան Հօր շնորհաւորութիւններն ու յաջողութեան լաւագոյն մաղթանքները փոխանցեց Դոկտ. ճորտընին: